— Ոչ, պատասխանեց հանգարած ծերունին։ Ինձ էլ, լ'նչպէս ամեն մի մարդու հարկաւոր է եղբայրական ազօթք։ Մի՛թէ իմ արածը գործ էր։ Եթէ մենք իսկապէս աշխատէնք, մի՛թէ մեր կեանքն այնպէս կընթանար, որ ամենքին նման չէ Աստծու պահանջած կեանքին։ Ո՛չ,

մենք ըսլորս էլ ծոյլ ծառաներ ենք և մեջ բուլորիս էլ հարկաւոր է Աստծու ողորմութիւնը: Ազօթեցէք, սիրելիս, ինձ համար: Խնդվեցէք ինձ՝ անարժանիս համար Աստծու ողորմութիւնը:

1856 թուին գեկտեմբերի 2-ին Հ. Տէօրալդ Մետիւն լի գիտակցութեամբ խաղաղ կերպով աւանդեց հոգին: Կօրի քաղաքի հանդուսարանում աւելացաւ և մի նոր գերեզման, որի վրայ բարձրանում է մի խաչ հետեւող կարճ մակագրութեամբ. «Հ. Տէօրալդ Մետիւն քահանան: Անյայտ ձեռները միշտ ամենայն հոգատարութեամբ զարդարում են այդ խաչը: Շիրիմի վրայից անպակաս են թարմ ծաղիկները, որոնք կարծես ասելիս լինեն, որ մեծ առաքեալի զգացածութեան գործն ապրում և կենդանի է և' նրա մահուանից յետոյ:

## II

### ԳԻՏՆԱԿԱՆ ԳԱՐԹԻՆՔ.

1879 թուին Ամերիկայում վախճանուեցաւ ոմն էլիու Թէրթիտ, զգաստութեան ինքնուրաց առաքեալներց և ընդհանրագիս մարդկութեաւ բարեկի համար աշխատաւոր մշակներց մէկը: Նա հասարակ մարդու օրդի էր, մանկութեան ժամանակ համարեա թէ ոչ մի կրթութիւն չէր ստացել, սակայն երկար և յամառ աշխատանքով ձեռք բերեց աչքի ընկնող գիտութիւն, որով իւր ժամանակակից ուսումնականների և գրող-

ների մէջ պատուաւոր աեղ գրաւեց, նա իւր յիսուն ապրուայ հասարակական գործունէութեամբ կեանքի ամենալսւսաւոր պիզբունքների անխոնջ քաղաքից հանդիսացաւ: Նու սիրում էր ասել:

— Մարդիկ յաճախ պարծենում են մարդկութեան ձեռք բերած յառաջազիմութեամբ: Նրանք հագարտութեամբ մատնացայց են տնում բազմաթիւ գիտական գիւտերի, արհեստագիտական հարագիտութիւնների և տեսակ տեսակ կատարելագործութիւնների վերայ:

Զեմ հասկանում, թէ ինչո՞ւ նրանք պարզան հիանում են: Հարիւթ միլիօնաւոր մարդիկ ապրում են հազարաւոր տարիներ: Նրանք բոլորն էլ ընութիւնից օժտուած են խելքով. Նրանց միաքը շարունակ մի որ և է բանով զբաղուում է: Ի՞նչ զարմանալու բան է, եթէ որ կեանքը կանգնած չի մնում, այլ քիչ քիչ առաջ է շարժուում և մարդկանց իւրաքանչիւր նոր սերունդ իւր հետ մի որ և է նոր բան է բերում, թողնելով իրենից յետոյ մի որ և է մեծ միտք, հանձարեղ գիւտ, կեանքի անհրաժեշտ բարեփոխումն:

— Ես ընդհակարուակն, ասում էր էլիու Բէրիտ, զարմանում եմ, որ մարդիկ մինչև այժմ համեմատաբար քիչ բան են արել, որ կեանքի մէջ տակալին ամէն աեսակ թերութիւններ կան, որոնք աչքի են ընկնում և որոնք կարող էին չլինել, եթէ մարդիկ խելօք և բարի գործ կատարած լինէին, եթէ որ նրանք բոլորն

էլ կեանքի մասին լուրջ կերպով մտածուծ լիւնէին։ Մտիկ տուելը և տեսէլը թէ՝ կեանքի մէջ ձեր շուրջը գուը շարունակ հանդիպում էր խուն գլուխների և զօրեղ ձեռքերի, որոնք կարող էին շատ ու շատ բան անել, հասարակութեանը մեծամիծ օգուտներ լիրել, որոնք սահայն առանց արտադրութեան կորչում են, որովհետև նրանց չդրծածեցին գործի համար, չօգտուեցին նրանցից, ինչպէս հարկաւոր է։

Իսքը էլլու բէրրիտ աշխատում էր իւր բոլոր ուժերն ու ընդունակութիւնը զարդացնել և իւր կիսագարեան տոկուն աշխատարով պարզ կերպով յայց տուեց, թէ ինչպէս ճշմարտութեան եռանդուն մշակը շատ բարեք կարող է անել։ Նա իւր գործունէութիւնը դարձնութեամբ սկսեց, իրսկ հասարակ բանւոր հալոցի և զնդանի առաջ կանգնելով։ Նրա հայրը չքաւոր էր և բազմանդամ ընտանիքի տէր։ Նա չկարողացաւ իւր որդիներին մեծ ուսումն տալ։ Նրա բոլոր զաւակների կրթութիւնը սկզբնական դպրոցի գամաթագրով լիւրջացաւ։ Եայց դրա վոլխարէն հայրն ամէն ջանք գործ գրեց նրանց ընտանեկան լաւ գաստիարակութիւն տալու։ Նա իւր զաւակներին ասում էր։

— Ես անկարող եմ ձեզ աշխարհային գիտութիւնների մէջ վարժեցնել, որովհետև միջոց չունիմ, բայց կարող եմ և պարտաւոր եմ իսկ ձեզ առառաջածային երկիւղածութեամբ կրթելու, որի համար կող հարկաւոր չէ; Պէտք է, որ իւշ-

ըաքանչիւրի սրտում ասառածային մի որ և բան լինի։

Այդ պատճառով երեկոները, աշխատանքից յետոյ, նա իւր բազմանդամ ընտանիքը հաւաքում էր վառարանի շուրջը։ Նրեխաները նստում էին կիսաշրջանաձև։ Կինն ու աղջիկները կարում, մանում և կարկառում էին, իսկ ծերունի հայրը, արծաթեայ ակնոցները դրած և կաշուէկազմ հաստ Աստուածաշունչը ծնկների վրայ ըռնելով, խաղաղ և մեզմ ձայնով մի որ և էր բան կարդում, պատմում էր և կամ թէ չէ բացարցում։ Նա շատ սկզբում էր անդիւցի գրող Շեկսպիրի գործերը։ Նա կարդում էր Շեկսպիրից ամբողջ կտորներ, որ և յետոյ իւր խօսքերով համառօտ կերպով պատմում էր ունկընդիւններին։ Եւ այդ միջոցին նա շարունակ առում էր։

— Տեսէ՞ք, զաւակներս, թէ ինչպիսի մարդկիկ են դրանք, ինչոր է յուզուում նրանց սիրտը, ինչպէս է մեր կեանքն ընթանում։

Ապա վերցնում էր Աստուածաշունչը, բաց անում, սիրով հարթում էր նրա դեղնած երեսները և աւելացնում։

— Խոկ այժմ լսեցէք, թէ ինչպիսի մարդպէտը է լինել և թէ ինչպէս պիտի մեր կեանքն ընթանայ։

Այդ երեկոները, որ անց էին կացնում երեխաները վառարանի շուրջը, զօրեղ տպաւորութիւն էին անում։ Մանուկ գլուխները սովորում էին կեանքի մասին մտածել։ Նրեխաներ

տեղում էին, որ կեանքի մէջ ամէն տեսակ վիշտ, նեղութիւն և տանջանք կայ: Այդ բոլորը նըանք իրենց որտին մօտ էին ըսդունում և երբեմն միանին, երբեմն էլ իւրաքանչիւր ոք տռանձին մտածում էին, իբրև պարտականութիւն, թշուառութեան տռաջն ոռնելու մասին:

Մի անգամ ճաշից յետոյ մայրը երեխաւ նըրին կաշէե հէքիաթը պատմեց, թէ ի՞նչպէս նա մի գեղեցիւնի փախցնելով տանջում էր նրան, պահելով նրան գոցի տակ: Փոքրիկ ելիւն ուշադրութեամբ լուռմ էր և, երբ հէքիաթը վերջացաւ, փոքր ինչ մտածելուց յետոյ հարցցեց:

—Մայրիկ, խօ այդ բանը չէ ճնարուած: Կաշչը չարեկն է: իսկ գեղեցկուհին մարդկաւ յին կեանքն է: Զարիքը տանջում է մեր կեանքը, նեղացնում է նրան: Երբ ես մեծանամ, կաշչի գէմ պատերազմ կերթամ: Ես կիարեմ նրա եղուսդները, կքանդեմ նրա պատերը և կազատեմ գեղեցկուհուն:

—Եւ ե՛ս, և ե՛ս, և ե՛ս, — աղաղակեցին երեխաները: Մոյզը ծիծաղեց:

—Կաշչը կորաւ: ի՞նչպէս կարող է նա այդ կտրեծների առաջ դիմունու:

Եւ երեխաները յաճախ մտածում և զբոյց էին անում այն ապագայ պատերազմի մասին, որ կաշչի գէմ պիտի մղէին: Անդրանիկ եղացըն իրեն պատրաստւեց, քննութիւն բռնեց և ժըղողավրկան ուսուցիչ գարձաւ: Էլիու ի գալոց գնալու ժամանակը չէր: Եւրաւ-

քանչիւր աւելուգ բերան նեղութիւն էր ընտանիքի համար: Երեխային ալհեսափ տուին: Նա դարձնանոց մտաւ: Այնտեղ նրա մէջ ծագած միտքը շարունակում էր որոշ ուզզութեամբ գործել: Ելիտւն միշտ մէծ հեաաբբթութեամբ դիտում էր, թէ ի՞նչպէս երկաթի շեկացած շերտը ծեծում են և թէ ի՞նչպէս մետաղի կոշտ կտրը ճնարանգ կեխպով ընդունում է մարդու համար անհրաժեշտ ձեր:

—Ոհմ, մատծում էր նա, մեռած երկաթն ևս կարելի է փոխիսել այնպէս, ինչպէս ուզզում ես: Եւ միթէ չի կարելի նոյնը անել նաև եռացող կեանքի հետ, փոխիսել նրան և տալ նրան աւելի կենդանի ընթացք: Հարկաւոր է միայն կամենալ և անել կասովոնալ: Ամեն մի գործ վարպետից վախում է: Կեանքի գործի համար նոյնպէս հարկաւոր են վարպետներ:

Եւ երետառարգ նէրբիտը, աշխատելով հնոցի մօտ, փուքով կրակն էր փշում, շատ և զօրեղ կերպով մտածում էր, ի՞նչպէս անէր, որ կեանքի վարպետ գառնար, կեանքն աւելի բարելաւելու համար:

—Հարկաւոր է սովորել, ասում էր նա ինքն իրեն: Կեանքը մեծ գործ է: Մի գլուխը, մի խելքը չի կարող նրան շուռ տալ: Արբան կարելի է հարկաւոր է ուրեշի խելքից օգտուել: Ու թէ մի մարդ, այլ մի ամբողջ ժողովուրդ անկարող է կեանքը միաքն իւր լուսաթեամբ ըմբռունելու: Գրա համար անհրաժեշտ է համայն մարդկաւթեան ջտնպը:

Ելիու Բէրբիտ որոշեց օտար լեզուներ սումորել, որ Տեշտ իրագործելի խնդիր չէր: Գարբանանոցը ջատ ժամանակ էր խլում, վաստակն էլ շատ չէր, իսկ գործի ոկղըում ինքնաշխատութեամբ ոչինչ չէր կարելի անել: Ուսուցիչ էր հարկաւոր: Ստիպուած էր իւր վաստակից վճարել գառագիւնը: Աեղուների հետ առաջին իսկ ծանօթութիւնից յետոյ՝ երիտասարդ գարբնի բանը հեշտացաւ և նա շուտով կարողացաւ մեռնակ իւր պարապմունքներն առաջ տանել, առանց ուսուցչի: Ելիու Բէրբիտ միաժամանակ սովորում էր երեք լեզու՝ լատիներէն, յունացէն և ֆրանսերէն:

Ոյս երեք լեզուները կմաստութեան հիմնական ոկղըունքների զլխաւոր բանալիներն են, առում էր նա: Ամբողջ հին իմաստութիւնը պահպանում էր յոյների և հովմայեցիների մէջ, իսկ այժմ ֆրանսիացիք բոլոր միւս աղքերեց առաջ են անցել:

Այդ երեք լեզուների վրայ նա շուտով առելացրեց և՛ մի չորսորդը՝ իսպաներէն: Գարբանանոցի աշխատամեջն անխափան առաջ էր գնում գիտական զբաղմունքների հետ: Զնդանի վրայ երկաթ ծեծելիու նա յունարէն անկանոն բարյերն էր խոնարհում, իսկ Տնոցի մէջ երկաթի շերտ պահելիս աղատ ձեռքով բառարանը բըռանած խօսքերն էր սերտում:

Պարապմունքները յաջող կերպով էին առաջ գնում, բայց ոչ այնպէս արագ, ինչպէս Ելիու Բէրբիտ կկամենարք: Նո օրէ ցօթ տւելի և աւելի

հակուում էր գէղի գիտութիւնը: Նրա առաջ հաղիւ նոր բացուած վարագոյսը ցոյց տուեց նրան մարդկային իմաստութեան անծայր ոլիկանոուը, երիտասարդ գարբնը ժամանակ չուն էր նրանով ուղածին պէս պարապելու, գարբանանոցի աշխատամեջը չէր ներում նրան այդք Ելիու Բէրբիտ մի քիչ վող հաւաքեց և մուրճն ու զնդանը մի առ ժամանակ բոլորովին թողեց: Նո մի ամբողջ կէս տարի նուիրուեցաւ գիտական պարապմունքի: Նո կանուխ առաւուաեան ժամը հնդից տմբողջ օրը մերթ մէկ, մերթ միւս առարկայով էր պարապուած: Հաւաքած կոպէկները սպառուեցան, նուտով ստիպուած էր նա գարձեալ գարբնոց գնալ: Բայց Ելիու Բէրբիտ այդ ժամանակում կարողացաւ հիմնական կերպով ուսումնասիրել մաթեմաթիկա, յունարէն, լատիներէն, իտալերէն, իսպաներէն, ֆրանսերէն և գերմաներէն:

Նուտով գարբին-գիտնակի համբաւը տարածուեցաւ ժողովրդի մէջ: Հարեւան քաղաքի գիմնազիոնում տեսչ տեղը բաց էր մնացել և Բէրբիտին հրաւելեցին այդ ուսումնական հաստառութեան գլուխ անցնել: Բէրբիտ հըաւելոն ընդունեց և իւր տեսչական պաշտօնի մէջ նոյնպէս սալում էր, ինչպէս գարբնանոցու մնդանի առաջ:

—Ես ձեզ նախանձում եմ, ասում էր նոր տեսուչն աշակերտներին: Զեր բանն ու գործը միայն սովորելն է: Զեր առաջ միոււած էր նա մարդկութեան մաքի գոհարները և գուք

կարող էք աղստ կերպով վերցնել նրանցից, որ քան կամենաք: Տեսէ՛ք, հարկաւոր պաշտօնը հաւաքելու դէպքը բաց չթողնէք: Կեանքը պահանջում է գիտութիւն և լուրջ պատրաստութիւն: Նրան հարկաւոր են ջերմեռանդ մշակներ և հմուտ վարպետներ: Դարձոցական կեանքը ամէն մէկ օքը օգտաւէտ կերպով անցկացրէք: Անայցեք ամէն մի ժամը, իւրաքանչիւր ըսպէն:

Ելիու Բէրբիտ ինքն ևս ո՛չ մի վայրկեան տնգամ չէր կորցնում: Նա լողում էր գիտութեան մէջ: Խնչպէս առլածը հացի վրայ է ընկանում և ուտում, այնպէս էլ նա ագահարար գիտութիւնները մէկը միւսի ետևից կուլ էր տալիս: Այդպիսի անօրինակ գրական աշխատանքը՝ գաստանում աշակերտաների հետ և իւր առանձնարանում՝ ուժասպառ արաւ Բէրբիտին: Երիտասարդ տեսուչը տարուայ վերջին իրեն շատ վատ զգաց:

—Այդ նրանիցն է, որ ես վաղուց դարբանանցում չեմ եղել, ասում էր նա և, քննութիւններից յետոյ հանելով վրայից անսչական համազգեստը, դարբնական նախկին գոգնոցը կապեց:

—Այստեղ, զնդանի առաջ այն չէ, ինչ ով տեսչական սենեակում, ասում էր նա: Այստեղ ինձ ո՛չ մի հիւանդութիւն չկայիլ: Արիւնս անդադար շարժման մէջ է և միտք թաքմ, որ առանց յոգնելու գործում է:

Դարբնանցում Բէրբիտ մի նոր միտք յշացաւ: Նա ցանկացաւ արելեան լեզունեւ

ըին ծանօթունալ: Նու սկսեց յարմար ձեռնարկաներ վնասութիւն կարենու գատագրքեր: Սակայն ելիու Բէրբիտ կանգ չառաւ այդ արգելքի առաջ: Նա վճռեց Ամերիկայից Եւրոպա անցնել, Անգլիա գնալ, այստեղ իրեն հետաքրքրութ առարկաները սովորելու համար:

Գողալով իւրաքանչիւր ողորմելի կոպէկի վրայ, Բէրբիտ սոսավ զնում է Բոստոն, որպէս զի այստեղից նառով Անգլիա գայ: Այստեղ նա մի հաճելի նորութիւն իմացաւ: Լսեց, որ Բոստոնից ո՛չ հեռու հարեան քաղաքում հնութեանց մատենագարան կայ, որտեղ կարելի է արևելեան լեզուներով գրուած գրքեր ձեռք բերել: Բէրբիտ գնում է այնտեղ, օրավարձով մանում է մատենագարանին դրացի դարբնանցն ու սոսպ գլխով նուիրուում իւր նոր պարապմունքներին: Նա առաւտօնները շատ կանուխ էր վեր կենում, դարբնանցից աշխատանքը սկսելու ժամանակից շատ շուտ և մինչդեռ տանտիկինը սուրճ էր պատրաստում, Բէրբիտ մեծ եռանդով զբաղուում էր հին երբայցական բառերով:

Հետաքրքիր է նրա այդ ժամանակի յեշատակարանից մի փոքր հատուած կարգալ: Ահաւասիկ նրա մի շաբաթուայ պարապմունքների ընթացքը, երբ Բէրբիտ իրեն լաւ չէր զգում:

—Երկուշաբթի, յունիսի 18-ին: Դուռխացաւում է: Կիւվեէի գրքից կարգացի 40 երես: Ֆրանսերէն լեզուով վարժութեան համար կար-

դացի 64 երես: Դարբնանոցում աշխատեցի 11  
ժամ:

—Երեքշաբթի.—Թարգմանեցի 65 տող եր-  
բայեցէլնից, 8 տող ասորելէնից, 10 տող չե-  
խելէնից, 10 տող լեհելէնից. 35 երես ֆրան-  
սելէն կազդացի: 10 ժամ էլ աշխատեցի դարբ-  
նանոցում:

—Չորեքշաբթի.—ինձ լաւ չեմ զդում, շոդ է:  
Երբայեցելէնից թարգմանեցի 25 տող. տեղեկա-  
գրութիւնից կազդացի 20 երես. դարբնանոցում  
աշխատեցի եօթ ժամ:

—Հինգշաբթի.—Յիսուն հինգ տող երբայե-  
ցելէնից և 8 տող ասորելէնից: Դարբնանոցում  
11 ժամ:

—Ուրբաթ.—Չորասապեցի: Տասներկու ժամ  
դարբնանոցում:

—Նաբաթ.—ինձ լաւ չեմ զկում: Բնական  
պատմութիւնից կազդացի յիսուն երես. դարբ-  
նանոցում տասը ժամ:

—Կիւրաթի.—Առառուածաշունչ կազդացի:

Այս նկատողութիւնը «Առառուածաշունչ  
կազդացի»—հանդիպում ենք մենք Եկութեակ օրա-  
տեարում ամէն կիւրաթի: Բոլոր միւս ձեռնարկ-  
ներն ու դասագրքերը վիտիսուում էին, իսկ  
Առառուածաշունչը մանկութեան օրերից ոկուած  
միշտ անբաժան ընկեր և ուսուցիչ մնաց գալ-  
քին—դիտնականի երկրաւոր կեանքի ընթացքում:

—Մասցած ըոլոր զբքերը, առում էր Բէր-  
բիտ, տալիս են ինձ արժեքաւոր կշիռ, իսկ Առ-  
առուածաշունչն իմ կողմնացոյցն է, որ ցոյց է

տալիս, թէ գէպի ուղղուեմ, թէ լ'նչպէս  
օդտաւէտ կացուցանիմ ձեռք բերուած գիտու-  
թիւնն:

Ելիու Բէրբիտ մի քանի տարի այդպէս  
աշխատելով, բացի զանազան գիտութիւնների  
մէջ լնդաբճակ ծանօթութիւն ձեռք բերելուց  
յեաց, ուսումնասիրեց տասնեւթ լեզու և  
քսանելիու բարբառ: Նրա մասին սկսեցին աւելի  
և աւելի շատ խօսել: Մի նահանգապետ արհետ-  
տագէտների ժողովում մի շատ գովասանական  
ճառ խօսեց դարբին—գէտնականի մասին:

—Զանազան տեսուկ հերոսներ և մարդկու-  
թեան բարեկամներ կան, առայ նահանգապե-  
տը: Ոմանք նոր երկրներ են գտնում և լրենց հայ-  
րենիքի հետ են միացնում ամբողջ նահանգներ.  
ոմանք նոր ոսկու փոշիներ են որոնում, նոր-  
մուծութիւններ են անում և հարստացնում են  
լրենց ժողովրդին: Բայց Ելիու Բէրբիտի նման  
մարդիկ աւելի յարգելի են և բոլորից բարձր են  
կանգնած: Բէրբիտները բաց են անում մեզ հա-  
մար ամէնաթանկագին բանը՝ լուսաւորում են  
ժողովրդի միտքը, ցոյց են տալիս, թէ լ'նչպիսի  
մնած ոյժեր են թաքնուած ժողովրդի մէջ. արա-  
գեռում են մեզ կեանքի, գիտութեան, աշխա-  
տանքի և պարտականութեան ամենալաւ և ամե-  
նաթանկագին գանձը: Փառք և պատիւ Բէրբիտ-  
ներին:

Արագըները նահանգապետի ճառն ու Բէր-  
բիտի նկարը հըատարակեցին: Բէրբիտը շփո-  
թուած էր, նա անկեղծօրէն կառկածում էր:

— Աւղիղն ասած, ես չեմ իմանում, թէ լինչո՞ւ ինձ այստափ գովում են՝ նրա համար, որ ես շատ եմ սովորել և քիչ ու միշտ բան դիտեմ։ Միթէ գտ ծառացութեւն է։ Մարդ որ սեղանի մօտ երկար նոտեց, կկարողանայ և՛ շատ ուտել։ Դա մի մուծ պատիւ չէ։ Գլխաւորն այն չէ, թէ զու լնչքան կերպ, լնչ սովորեցիր, այլ այն, թէ ուրքան աշխատեցիր և լնչ արկիր կեանքի բարութման համար։ Իմ գովասանքը, եթէ երբ և իցէ ձեռք կրերեմ, ապագայումն է։

Եւ Բէրբիտը գտում էր, որ արդեն բաւական է շարունակ սովորելը, պաշար հաւաքելը նու գիտակցում էր, որ ժամանակ է արդեն իր կողմեց ևս ժողովրդին և կեանքին մի բան տարու։

— Նաւը բաւականացափ բեռնաւորուած է, ժամանակ է արդեն գէպի ծովը նաւելու։

Բայց գէպի ո՞ւր, լնչ ուղղութեամբ, լնչ և լնչ բանի համար գործադրել ձեռք բերած գիտութիւնը։

Խորասուցուելով այդ մտքերի մէջ, Ելիս Բէրբիտ մի անդամ կիւրակի ճաշից յետոյ քաղաքի խուլ փողոցներում զրօննում էր և անդիտակցաբար կանգնեց մի բաց պատուհանի առաջ, որից Երկում էր մի ինչ որ արհեստանոցի ներոց։ Պատուհանի առաջ գտուած էր միքենայ, կողքին էլ մի մամուլ։ Մեքենայի կազմքին կանգնած էր մի պատանի և պատահանից դուրս էր նայում։ Բէրբիտը սկսեց պատանու հետ խօսել։

— Այդ լ՞ոնչ միքենայ է։ Այստեղ լ՞ոնչ արշեստանոց է։

— Սա ապագբական մամուլ է։ Տպարան է։ լ՞ոնչ էք ապսւմ, հարցը եց Բէրբիտը, կամ մենալուկ իմանալ, թէ արդեօք լսադիթ, գերք կամ միտենէ ուրիշ բան ապսւմ են։ Մենք մտքեր ենք ապսւմ, անսպասելի կերպով պատասխանեց պատանին։

Պատասխանը Բէրբիտին գալմացրեց։

— Մտքե՞ր։ Ի՞նչպիսի մաքեր։

— Այն, որ լուսաւոր ուղեղներեց է գուշս գալիս, աղնիւ հոգիներն են աճեցնում։ Մենք այդ մտքերն ամբացնում ենք գրեռով և տպում թղթի վրայ։ Այդ եղանակավ մեր շնորհիւ գեղեցիկ մտքերն անմահ են գաւնում։ Մենք այստեղ մահկանացնուն անմահացնում ենք։

— Իսկ չէ՞ր կարող նաև իմ մտքերն ես ամբապնդել, յաւիտենական գարձնել, ակամայից գուշս գուաւ Բէրբիտի բերնից։

— Ինչո՞ւ չէ, եթէ ձեր մտքերն արժանի են զրան, պատասխանեց պատանին։ Եթէ գուք միզըն բան ունիք մարդկանց ասելու, բերեք այստեղ և մենք կտպինք։ Լաւ մտքերը թանկ են, մարդկանց համար պէտքական։ Նրանք չպէտք է կորչին։

Բէրբիտ մնաս բարեւ առաց և տուն վերադարձաւ, բայց պատանու խօսելն շաբունակ հալածում էին նրան։ Նա գնում էր և ինքն իր են մըմնջում։

— Այս, այս, լաւ մտքերը պէտքական են

մարդկանց համար: Նրանք չպէտք է կորչեն: Կթէ մէկն ունի նրանցից, պէտք է նրանց ամրացնէ: Բէրբատ իրեն համար գործ գտաւ: Նա որոշեց թէ որտեղ պէտք է գործադրե և ըստ զիտութիւնն ու կեանքի մասին ունեցած մտածմունքամունքները: Նա որոշեց մարդկանց մասնակից անել այն բալոր լուսաւոր և բարի բաներին, ու ինքն էլ սովորել և ուրիշներից ձեռք բերել:

Ելիու Բէրբատ շատ էր մտածում, թէ ո՞րպիսի մորելը տպագրութեան յանձնի: Մարդկէ ինչպիսի մտքերի աւելի կարեք ունին, ինքն իրեն հարցնում, էթ դարբեն-դիտ նականը: Ո՞ր խօսքն առանձնապէս օգտակար կլինի հասարակութեանը:

—Պարզ է, պէտք է տալ այնպիսինեւը, որոնց կարիք է զգացնուում, այն, ինչ որ մարդկանց պակասում է, պատասխան էր տալիս ինքն իրեն: Բայց ի՞նչ է պակասում: Պակասում է հոգու արխութիւն, հաւատ զէպի անձը, զէպի սեփական ոյժը, պակասում է ճշմարատութեան և բարութիւն զօրութիւնը: Հարկաւոր է մարդկանց մէջ եռանդ զարթեցնել: Զմեռը երկեր ննջում է: Ցրակը զզմայում էն նրան: Ո՛չ մեր բուսականութիւն չել լինում: Բնութեան սահեծագործող ոյժը կապանքէ է մատնուում: Բայց ահա արեգակը տաքացնում է, հողը բացաւում է, անձրեւ ցողում է նրա վրայ և յանկարծ ամէն ինչ կենդանանում է: Ամէն տեղ սկսում է կանաչել, աճել ու ծաղկել: Միենայն բանին է սպասում նաև մարդու հոգին: Անհրաժեշտ է

նրան ջերմացնել, քաղցր-տաք խօսքով փափկացնել նրան, կենդանի մտքի անձրեւ իջեցնել նրա վրայ: Մարդկանց դլիս և հոգու մէջ թաքնուած էն կենդանացնող զօրութիւն, սպայծառ մտքել և ազնիւ զգացմունքները: Միայն նրանք յանախանշարժ են մնում: Եւ որքմն մարդիկ իրենց կեանքն անպատճ են անցկացնում: Ապրում և մեռնում են, կարծես նրանց հոգու մէջ ոչինչ չլիները: Կեանքի համար ոչինչ չեն անում, մինչ գեռ շատ բան կարող էին անել,—թէ իրենց և թէ ուրիշներին մեծ բարեք անելով:

—Մարդու ճրագ է, ասում էր Ելիու Բէրբատ: Լուցկին քաշիր, ճրագը վառիր և նա երկար կտոսաւորէ, կվառուի հաւասար և պայծառ լուսով: Իսկ եթէ ձեռքի տակ լուցկի չեռ ունենալ, ճրագներն անօգուտ կմնան, իրենը իրենց չեն վառուիլ:

—Կիսրձեմ լուցկի գառնալ, որոշեց Ելիու Բէրբատ: Նատ կարելի մեծ բան չկարողանամ անել, մեծ կրտկ առաջացնել, բայց թերեւ գոնէ մի քանի ճրագ վառել կարողանամ:

Դարբին-դիտնականի ցանկութիւնը ժողովրդին «ցնցել, սթափեցնել» էր, այսինքն բանուորներին, գերացիցներին և իւր եղբայրակից արհեստաւորներին:

—Մեծ, ընդհանուր ժողովրդական դործի, կեանքի բոլոր կողմերի բարելաւման համար աշխատող մարդկանց գործունեայ, ֆիր և ընդունակ մշակների թիւը պակաս է, մտածում էր Ելիու Բէրբատ: Այդ հասկանալի է այն պատ-

ճառով, որ ժողովրդի մեծագոյն մասը կեանքի բարւպման գործի համար ոչ մի մասնակցութիւն չունի և չի էլ կարող ունենալ. Նա ընդունակ է գործ սկսելու, իւր ընդունակութիւններն օգտաւէտ կերպով դորժագրելու: Ժողովրդի մեծ մասը անկիրթ է, վատ է կրթուած: Ագարակը մեծ է, ծախքերն ահագին, շատ բանուոր է հարկաւոր, իսկ ամբողջ տնտեսութիւնը օգտարքունքների վրայ չէ դրուած: Անտառը չեն շահագործում, արտերը չեն հերկում և չեն ցանում, երեսի վրայ թողած պարտէզը չեն մշակում: Ի հարկէ ծայրը ծայրին անկարելի է հասցնել: Բոլոր ծախքերն անկարելի է ծածկել: Ամէն տեղ պակասութիւն: Տնտեսութեան մեքենային հարկաւոր է լրիւ ընթացք տալ, շահագեր դարձնել նրա բոլոր կէտերը: Այդպէս պիտի անել նաև ամբողջ երկում: Անկիրթ կամ քի կըթուած, վատ գաստիարակուած ժողովուրդը մեռած զբամագլուխ է: Նա անշարժ պառկած է: Նրա արժէքը մեծ է, մինչդեռ տոկոս չի բերում: Երկիր հարստութիւնը չի աճում:

— Ես կդառնամ ժողովրդական «սեղանաւոր», կը բանամ «լումայափոխութեան» խառնութ, ասում էր ինքն իրեն ելիու բերքիտ: Այն բարձր և լուսաւոր բաները, որ նախկին դարերի գլուխներն են մտածել, այն ինչ որ մեծ հոգեներն են արտագրել և որ ես տարիների ընթացքում սովորելով ձեռք բերի, այժմ ես այդ բաներին ընթացք կտամ, կաշխատեմ ամբոխին—բազմութեանը մատչելի դարձնել:

Ելիու բէրքիտն սկսեց յօդուածներ գըել: Ժողովրդի մէջ նա ընթերցողներ ունեցաւ:

— Զեզ, ով ծանը կեանքի մարզիկ, իմ թանկագին եղբայրներ, ուղղում եմ խօսքս, զրում էր ելիու բէրքիտ: Ես, դարձինս, կամենում եմ ձեզ տաել, թէ ի՞նչպէս պէտք է յան. Կալի, պատուածը և զուարթ կեանք հարթել: Հարկաւոր է, որ իւրաքանչիւր որ իրեն պատրաստէ: Բաղդն ինքն իրեն չի գալիս, վերելց ցած չի ընկնիլ: Բաղդը մի հազուադիւտ թրաշտուն է: Նա չի սիրում մեր կեանքի խաւարն ու ցեխը: Նա ապրում է լուսաւոր և մաքուր բարձունքներում: Ով որ նրան տեսնել է ուզում, նրա հրաշալի երգը լսել. Նա պէտք է բարձրանայ կեանքի լուսաւոր և մաքուր բարձունքը:

Այնուհեան բէրքիտն ասում էր, թէ ի՞նչպէս մարդ, եթէ կամենայ, կազոլ է սովորել, աղնուացնել իրեն նոյն իսկ կոշտ և հասարակ աշխատանքով: Նա համեստօրէն, առանց մի որ և է գովասանքի, պատմում էր իւր մանկական և պատանեկական ցնորքների մասին՝ կըուուելու կաշչի, կեանքի այդ չարերի դէմ: և թէ այն, ինչպէս ինքը պատրաստում էր այդ կոսւի համար:

—Պատերազմ! Կաշչի դէմ: արշաւանքի պատրաստուեցէք, հաւերբում էր նա իւր ընթերցողներին: Գործիքներ ձեռք բերէք. Լոյս հաւաքեցէք, մտքի և աւելի ևս հոգու լոյս: Այդ

լոյսը Կաշեց չե սիրում, չե կարողանում տա-  
նել; Նրանից նա փախչում է:

— Դժուար ե ծանր է մեր կեանքը, ուրիշ  
անդամ գրում էր նա: Ելքեմն անկարող ենք  
լինում մեր լուծը քաշելու: Կամենում է գոնէ  
մի առ ժամանակ մուտանալ, ցնորդների անձնա-  
տուր լինել: Բանսող մարդու համար մեծ հրա-  
պար գլուխունն է: Զգուշացէք նրանից: Կա-  
պոյը բանական է: Զգուշացէք այդպիսի գե-  
ղութ բժշկել:

Սացառոտ անտառում շեշը չի օդնել։  
Հարկաւոր է ուղեցոյց։ Անտառից և մեր կեան-  
քից դուքս գալու համար ո՞չ թէ գինեվաճառին  
պէտք է ուղեկից ունենալ, այլ ուրիշ մարդ։  
Մարդ ոչ թէ եւը ձեռքում բաժակ ունենայ-  
այլ լաւ և բարե զերք։ Եերնումը խելօր խօսք  
լինե, իսկ սրառում ոէր և արդարութիւն։ Խնա-  
յեցէք ձեր թանկագին, արիւն քրտինքով ձեռք  
բերած կոպէկը։ Մոլոսին մի՛ զոհէք նրան, մի՛  
քցէք գինետան արկոյը։ Նրանով պատրաստու-  
թիւն ձեռք բերէք, կեանքի անտառից հանող  
«ուղեկից» ունեցէք։ Կըսաքանչիւլ աւելող կո-  
պէկով ձեր մաքի և սրակ համար լուցիկ առէք։  
Մի՛ խմէք ո՞չ արադ և ո՞չ էլ գինի, որոնք ձեր  
միտքն ու հոգին մթնացնում են, այլ խմեցէք  
հշմարկա գիտութեան կենդանի ջուրը։ Նա  
միայն կլուանայ ձեզ ծանք, յաճախ խաւար  
կեանքի կեղտը։ Նա միայն կառաջնորդէ ձեզ  
դէպի ընդարձակ և լուսաւոր կեանք։

0 գտուելով մարդկանց ամէն մի ժողովից,

Էլեու Բէըսիտ տաք կերպով մառեր էր ասում  
գդաստութեան մասին, գըքոյկներ էր ըստա-  
նում, իւր գըքերից հատուածներ էր կաթում:

— Եո իմ կեանքումա մշակների մէջ, գետական աշխարհում, ուսուցչապետների, գեղագէտների և հեղինակների շըջանում տեսել եմ շատ տաղանաւգոր և խելօք մարդկանց, որոնք սահայն կորան, մեռցրին իրենց տաղանդը շշի առաջ, այնպէս որ ինձ վախը բռնում է արագ և դիսնի տեսնելիս։ Եթէ մենք տեսնէինք, որ մէկը թանկագին կտորեզէնի վրայ արջասպ կամ ծաժմբախառն թթուուտ է թափում, ձայն կը տալինք նրան։

—ի՞ւս, ես անում, կաց:

ձիշա գրա նման, ամէն անգամ, երբ ես  
տեսնում եմ մէկին արադ խմելիս, ուզում եմ  
կանչել:

— Խնչո՞ւ համար ես անում այդ; Կա՞զ;  
Պո՞սնը մի՞ տար ներսդ:

—Մարդկութեան այդ սալսափելի թշնամու, տէկօհօլի այդ թոյնի, ինչպէս մահուան առաջ, թոյլ և անկարող են թէ՛ հարուստը, թէ աղքատը, իմաստունն ու ռամնիկը, գիւղացին և պետական անձը: Զգուշացէք այդ ահոելի վեշապից՝ կանաչ օձից: Ով որ հէնց թէկուզ և բատի ծայրը տայ նրան, կկլանուի ամեռողջապէս շեռու նրանից: Զգուշացէք մինչև իսկ նրա վրայ նայելուց:

Բէրբետին շատեցն էին ծաղրում։ Ասում

էլին, որ նա շտու հեռուից է ըռնում, աւելորդ տեղն է երկեւդ կրում:

Ա՛յ, պատասխանում էր զգաստութեան ան-  
խոնջ քարոզիչը, — սուր գանահն երեխային ձեռ-  
քին խաղալիք չէ և կրակով յարգին մօտենալը  
վատ հանաբ է: Աւելորդ զգուշութիւնն այս-  
տեղ դործին չի վնասիլ: Թոյլին, հիւանդին պահ-  
պանում են ամէն տեսակ պատահարից, թա  
փանձիկց: Թոյլ մի տուէք, որ թափանձիկը  
կեանքի մէջ մուտք դործէ, արգելեցէք նաև աշ-  
կօհօլի աղատ մուտքը: Ամուր վակեցէք ձեզ  
գուները նրա առաջ: Բայց չէ, զուք յանցա-  
ւորներին եօթ զոցի տակ, հաստ պտտերի և  
ամուր վանդակների ետև ըանտերում կփակէք,  
իսկ աշկօհօլը՝ այդ սատանայի արթւնը, ամենա-  
ահռելի ոճրագործը... հարկաւոր է նրա ձեռք  
ոտքը շղթայել: Աւստի մի՛ ծաղրէք մեզ, այլ օդ-  
նեցէք մեզ նըան՝ այդ սատանային շղթայելու  
դործում, որ ամէն մի շշե և բաժակի տակին  
նստած է:

Որպէս զի զգաստ խօսքը աւելի ընդարձակ  
չափով տարածուէք և հասնէք մինչև ամենա-  
խուլ անկիւնները, Ելիու Բէրբիտ, որպէս ճշմա-  
րիտ առաքեալ, տոպրակին ուսն առձտ ոտով  
շըջում էր զիւղից գեւդ և կալուածից կալուած:  
Նրան ամէն տեղ սիրում ընդունում էին և ամե-  
նայն յօժարութեամբ լուս: Նրա զօրաւոր և  
համոզեցուցիչ խօսքն ամէն տեղ մտածել էր  
տալիս ունկնդիրներին: Հատերը ըսլորովին թո-  
ղին խմելը: Եւ կես տարի անցնելուց յետոյ,

Երբ Ելիու Բէրբիտ հանդիպում էր նրանց, հարց-  
նում էր:

— Հը, ի՞նչպէս ես, բաժակին չե՞ս կարօ-  
տել: Կեանքը խօ՞ աւելի ծանը չէ: Կինդ և երե-  
խտներդ չեն գանգատուում քեզնից:

— Ի՞նչ ես ասում: ուրախութեամբ պա-  
տասխանում էին նրանք: Կարծես այժմ նոր  
ենք միայն աշխարհ տեսնում: Ընտանիքներին  
մէջ այժմ բարիք է: Կանայք այլ ևս չեն դան-  
դատուում, մենք ինքներս էլ ուրախ ենք:

Այդպէս, զգաստութեան քարոզներով թա-  
փառելով, Ելիու Բէրբիտ կտրեց Ամերիկայի նշա-  
նաւոր մասը, Եղաւ նաև Եւրոպայում, Անգ-  
լիայում: Իւր շրջագայութեանց միջոցին նա  
ամէն բան ու շագրութեամբ դիտում, զննում  
էր. ամէն բան ջակում էր, թէ ո՞րը ի՞նչ բանի  
համար և ի՞նչպէս պէտք է գործադրել: Եւ աշդ-  
պիսով նրա համար պարզուեցաւ, որ կեան-  
քում ամէն բան այնպէս էլ հեշտ չէ, ինչպէս  
որ առաջին անդամ այդ երկում է: Կեանքի  
մէջ կան շատ երեսյթներ, որոնք սերտ կերպով  
կապուած, հիւսուած են իրար հետ և չի կա-  
րելի նըանց առանձին առանձին փոփոխութեան  
ենթարկել, առանց միւսներն ես փոփոխած լի-  
նելու:

Դիուար է անտառի մի մասը չօրացնել,  
մնացած տարածութիւնը ճահճային վիճակի մէջ  
թողնելով: Եթէ հարկաւոր է չօրացնել, պէտք է  
ամբողջը չորացնել:

1844 թուին նա վերադարձաւ Ամերիկա և

սկսեց «Քրիստոնեայ» անունով մի թերթ հրատարակել:

— Աս մի «Հոգևոր» թերթ չէ սովորական մտքով, ինչպէս առհասարակ մտածում են ուշըները, վերնագրին նայելով,—դրում էր իւր առաջնորդող յօդուածում նոր խմբագիւրը: Դա կլինի սովորական մի շաբաթաթերթ, որտեղ ընթերցողը կդանի բոլոր վերջն նորութիւնները և որի մէջ խօսք կլինի կեանքի բոլոր երկոյթների մասին, որը սովորաբար պէտք է լինի ամէն մի ուրիշ թերթում: Միայն թէ կեանքի այս բոլոր երկոյթները և ամենավերջին նորութիւնները պէտք է ի նկատի առնուեն մի ընդհանուր, այն է Աւետարանի, քրիստոնէական տեսակետեց: Այսպիսով շաբաթաթերթը կաշխատի քըրքիստոնէական նշանագրութեան և սիրոյ լուսով ուժեղ կերպով լուսաւորել մեր խաւար կեանքի բոլոր մուժ անկիւնները:

Նոր շաբաթաթերթը շատ բան ունէր առելու, ժամանակը զարթնած էր: Տաք վէճեր էին լինում, արդեօք նեղք-սորուկներին ազտառութիւն տալ թէ՞ ոչ: Կային մարդեկ, որնք ասում էին թէ՝ Առոտած ինքն է նեղերին սարկութեան մէջ զրել: Ոմանք էլ զգուշացնում էին բոլոսւթիւններից և աղմուկներից, եթէ յանկարծ ոտքուկներն աղատուէին: Եէրիտ եռանգուն կերպով ընդդիմադրում էր, հակառակն էր ապացուցանում:

— Ամօթէ է մինչև իսկ գրելը, թէ սարկառթիւնը չի կարող լինել, — զայրանում էր «Քրիս-

տոնեայ»ի հրատարակելը, — և թէ չի կարելի մարդկանց ըստ տեսակի, կաշուի դոյնի և ըստ ցեղի բաժանել: Թուում է, թէ մարդիկ տասն ութ և կէս գարի ընթացքում պարտաւոր էին ու փականնել այն միտքը, որ բոլոր մարդիկ եղացըներ են և որ բոլորն իւ բանական կեանքի միենյն իրաւունքն ունին: Սակայն բանից դուրս է գալիս, որ այդպէս չէ: Շատերը, թէն քըրքատոնեայ են կոչուում, բայց մինչեւ այժմ չեն հասկանում այն պարզ և հիմնական նշմարտութիւնը, թէ ցածացնելով մէկին, մարդ ամէնից առաջ իրեն է ցածացնում, իւր սեփական արժանաւորութիւնը:

Երբ խօսք էր լինում Հերովոային Միացեալ նահանգների պատերազմի մասին Հարաւայինների հետ ջորտերի աղատութեան համար, ելիու Բէրքիտ յամառ կերպով գրում էր:

— Աւելի լաւ է հարաւայիններից գնել բոլոր այնտեղ գտնուած ջորտերին: Փող հաւաքեցէք: Դա աւելի արժան կնատի: Պատերազմը կսկսուի, արիւն կթափուի, գաշտերը կդատարկուն, վաճառականութիւնը, արտահանութիւնն ու գետութիւնը կանգ կառնեն: Այս բոլորն աւելի թանկ վճար է ջորտերի աղատութեան համար, քան թէ պէտքական հարեւո մելիոնները:

Եղբակացութեան մէջ նա ասում էր:

— Միթէ անկարելի է միլիոնաւոր ընկածուած եղբայրների աղատութեան գործը լուսաւոր կերպով առանց բունութեան, անէծք-

ների և հառաջանքների, ուրախ և խաղաղ ցընչ  
ծութեամբ լիազործէլ:

—Մարդկի, եղբայրներ, հարցնում էր նա,  
որտեղ է ձեր եղբայրութեւնը, որտեղ է ձեր  
Քրիստոնից ընդունած պատուէլները: Չբաւակա-  
նալով հրատարակած յօդուածներով, Լիլու Էէր-  
բիտ խաղաղութեան քարոզով ման եկաւ Միա-  
ցեալ Նահանգները, անցաւ նաև այս կողմը,  
այցելեց Անդվիա, Ֆրանսիա և Գերմանիա: Ամէն  
տեղ նա ժողովներ էր կազմակերպում, ճառեր  
էր արտասանում, յաւաչ բերելով մարդկա-  
յին լաւագոյն զդացմուեքներ: Նրան ջանքեն  
ի գույք չկորան: Նրա ստիպելով Բընէլում,  
Փարիզում, Ֆրանկֆուրտում և Լոնդոնում խա-  
ղաղութեան ժողովներ գումարուեցան: Լիլու  
Էէրբիտ այդ ժողովներով ուրախանում էր, ինչ-  
պէս մի երեխայ:

—Դըանք,—առաջին ծիծեռնակներն են—  
առում էր նա ուրախութեամբ: Թո՛ղ ամբողջ  
աշխարհը մի անդամնց գործի չձեռնարկի: Հի՞  
որ նրա առաջին համբաւաբերներն արդէն  
եղան մեղ մօտ: Կարելի է թէ՝ կեանքի հունձը  
վերջին անգամ չէ մարդկային թշնամութեւնից  
ցրտահար լինում, բայց և այնպէս բանը գէպի  
գարունն է գնում: Խնչքան էլ որ այժմ ցուրտ  
է, բայց ծիծառներն արդէն ջեւմութեւն են  
աւետում, և ոչ մի կերպ ձմեռնային սառնա-  
մանիք: Մի ժողովում անդամները մեծ հանդէ-  
սով պատուեցին Էէրբիտին: Ճառախօսն ասաց  
նըան:

—Դուք առաջին դարբինն էք, որ փոխա-  
նակ որի ձեր զնդանի վրայ խաղաղութեան ճիւղ  
պատրաստեցիք: Զեր զնդանը ձեր ազնիւ և մե-  
ծահոգի սիրան է, իսկ ձեր մուրճը ձեր կրակոտ,  
սիրով լի խօսքն է գէպի մարդը: Դուք շատ աշ-  
խատեցիք և հպարտութեամբ կարող էք ձեր աշ-  
խատանքի վրայ նայել: Տայ Առառուած, որ «ձեր»  
դարբնանցում դարբինները ընաջինջ չլինին:  
Զեր աշխատանքների բոմբինով մարդկութեւնն  
ամէնից շուտ կպատրաստէ իւր բազգը:

Փառք դարբին Բէրբիտին:

Փա՛ռք, փառք, փառք, կրկնեց ժողովը:

Հայրենիք վերադառնալուց յետոյ Բէրբիտ  
նորից սկսեց իւր գործունէութեւնը. նա ամե-  
նուրեք, ուր որ լինում էր, ճառեր էր արտա-  
սանում, տանելով իւրեն հետ խաղաղութեան  
ճիւղը:

—Ես շատ երկներում եմ եղել, ասում էր  
նա, տեսել եմ շատ ժողովուրդներ և խղճով  
պէտք է տսեմ ձեզ.

—«Ամէն տեղ միենոյն բանն էք տեսնում,  
բոլոր պատուաւոր մարդկի ցանկանում են խա-  
խաղ կերպով աշխատել: Ամէն տեղ լաւագոյն  
մարդկի միենոյն ընդհանուր մտածմունքն ու-  
նին, այն է՝ լինչպէս կազմակերպել եղբայրական  
կեանքը: Եւ այժմ, ամէնից յետոյ, որ տեսել և  
լսել եմ, ես ևս նոյնը կասեմ: «ոչ-մարդն է  
մարդու թշնամին»: Մենք, բոլորս, ինչպէս նաև  
առանձին անհատներ և ժողովուրդներ մի ընդ-  
հանուր թշնամի ունինք, դա չարին է, մտքի և

հոգու լիակարք։ Այդ թշնամու դէմ կռուեցէք։  
Նբան դէմ դնելու համար հաւաքեցէք ձեզ ըստ-  
լոր ոյժերց։

Եւ այսպէս մէնչև կեանքի վերջը՝ եօթա-  
նասուն տարեկան հասակը, ելու հերսետ ան-  
դաբօւմ կերպով ցանում էր բարի, եղբայրա-  
կան և բանաւոզ զաստ կեանքի սերմեր։ Նա  
ըստ Քրիստոսի խօսքի աշխարհի լոկական աղն  
ու լոյն էր։



Մայր Արքուի սպարանում վաճառում են  
հետեւեալ նոր հրատարակութիւնները.

|  | Բ.            | Գ.    |
|--|---------------|-------|
| 1. Ժամագերք մեջադեք (կազմած)   | 2             | —     |
| 2. Ժամագերք գրպանի (կազմած)  | 1             | 50    |
| 3. Մեղուաբուժութեւն Գ. Ղազարեան  | —             | 50    |
| 4. Դաւիթ Հարբացի Գ. Տ. Մկրտչեան  | —             | 50    |
| 5. Աղէքսանդր մեծ թարդ. Վըթանէո քն.<br>Մովիսսեան                                | —             | 50    |
| 6. Հայկականք Գ. Տ. Մկրտչեան  | —             | 50    |
| 7. Աստուծուն թէ Մամնային. թարդ.<br>Մամբրէ վարդ.                                | —             | 3     |
| 8. Բանաստեղծութիւններ և Կիրակոսի հարսա-<br>նիքը. գրաշ. Ներսէո Տ. Ալեքսիքեան    | —             | 50    |
| 9. Հռգեբանութեան հիմնական գաղափարների<br>մասին խմբագրութեամբ. Տիգրաննեամի — 40 |               |       |
| 10. Մարդուս շամ հող է հարկաւոր թարդ.<br>Վըթանէո քն. Մարդարեան                  | —             | 5     |
| 11. Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և<br>Մ. Արեգեան Ա. յիսնեակ                     | —             | 15    |
| 12. Նոյնը Բ. յիսնեակ   | —             | 20    |
| 13. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարդ. Մ. վրդ. — 10                                   |               |       |
| 14. Բարի սերմեր թարգմ. Մամբրէ վարդ. — 10                                       |               |       |
| 15. Էջմիածնի ծոցի օրացոյց 1905 թուականի — 20                                   |               |       |
| 16. Յուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան 2 —  |               |       |
| 17. Գելցեր. պատմութիւն Բիւզանդական<br>կայսրների թարդ. Մեսրոպ վարդապետ 1 —      |               |       |
| 18. Խոսրովիկ թարգմանիւ և երկանիբութիւնք,<br>Դարեգին վարդ. Յովիկիեան . — 1 20   |               |       |
| 19. Հայոց Նոր Վկաններ, Մանանդեան և<br>Անառեան, գիտական .                       |               |       |
| 20. Նոյնը ժողովրդական Ա. հա .  | <<Ազգային գրա |       |
| 21. »  | »             | Բ. հա |

## «Ազգային գրադարան»



NL0312850

12.842



Տասն օրինակից տւելի գնողներին 20%  
դեղչ կը լինի։  
Դիմել Տվ. Էշմաձին, Типографический  
Комитетъ.